ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ 14-45
ԻՆԿԱՍԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք. Երևան 08 հոկտեմբերի 2014թ.

«Հայինկասացիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Հայինկասացիա), ի դեմս գործադիր տնօրեն Լյուդվիգ Սարգսյանի, գործելով ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ Ոստիկանության կողմից 2006թ. սեպտեմբերի 27–ին տրված թիվ 50 ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզիայով և ղեկավարվելով կանոնադրությամբ, մի կողմից, և ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս ՀՀ գլխավոր հարկադիր կատարող Միհրան Պողոսյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հայինկասացիան՝ համաձայն «Ինկասացիայի մասին» ՀՀ օրենքի պահանջների, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգի և պայմանների, ինչպես նաև Պայմանագրի պայմանների, իրականացնում է կանխիկ դրամի (այսուհետ՝ Արժեքներ) ընդունում, փոխադրում (տեղափոխում) և հանձնում (ինկասացիա), անհրաժեշտության դեպքում նաև՝ ժամանակավոր պահպանություն Հայինկասացիայի դրամապահոցներում, իսկ Պատվիրատուն դրա դիմաց վճարում է Պայմանագրի 6-րդ կետով սահմանված կարգով:

2.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հայինկասացիան պարտավորվում է՝

2.1.1. Պատվիրատուին տրամադրել անհրաժեշտ քանակի ինկասատորական դրամական պայուսակներ:

2.1.2. Իր ուժերով և միջոցներով իրականացնել Արժեքների ընդունում, փոխադրում և հանձնում՝ Պայմանագրի Թիվ 1 Հավելվածում նշված ժամանակացույցի և պայմանների համաձայն:

2.1.3. Փոխադրման ենթակա Արժեքները Պատվիրատուից ընդունել նախօրոք կնքված ինկասատորական դրամական պայուսակներով (կամ հատուկ փակվող արկղերով, այսուհետ՝ պարկ/պարկեր)՝ ստուգելով պարկերի և կնիքների (կապարակնիք կամ միանգամյա օգտագործման կնիք) ամբողջական (անվնաս՝ առանց պատռվածքների, կարկատանների, կնքված) լինելը և կից պիտակի առկա վավերապայմանները (այսուհետ՝ պարկերի ամբողջականություն): Ընդ որում, պարկերը փակելու համար կնիքների (կապարակնիքների կամ միանգամյա օգտագործման կնիքների) առկայությունը ապահովում է Պատվիրատուն:

2.1.4. Չընդունել Արժեքները պարունակող պարկերը այն դեպքում, եթե խախտված են պարկերի ամբողջականությունը, սխալ են ձևակերպված ուղեկցող փաստաթղթերը՝ մինչև թերությունների վերացումը:

2.1.5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովագրել ինկասացվող Արժեքները:

2.2.Պատվիրատուն պարտավորվում է՝

2.2.1. Իրականացնել հետևյալ նախապատրաստական գործողությունները՝

- ստուգել պարկերի չվնասված լինելը,
- պարկերը ստուգելուց հետո համոզվելով, որ դրանք վնասված չեն՝ վերահաշվել գումարը, փաթեթավորել, դնել պարկերի մեջ, լարանցել (կտորից լինելու դեպքում), վրան փակցնել պիտակ և կնքել դրանք կնիքով (որը համապատասխանում է Հայինկասացիային հանձնված օրինակին),
- յուրաքանչյուր պարկի համար երկու օրինակից լրացնել Արժեքներին ուղեկցող ցուցակ (այսուհետ՝ Դրամական հասույթով պայուսակը ուղեկցող տեղեկագիր)՝ նշելով պարկի համարը և այդ պարկում տեղադրված գումարի չափը, կնքել Դրամական հասույթով պայուսակը ուղեկցող տեղեկագրերը Պատվիրատուի կնիքով (կնիքի բացակայության պարագայում Դրամական հասույթով պայուսակը ուղեկցող տեղեկագրերի երկու օրինակները վավերարցվում են Պատվիրատուի պատասխանատու անձի ստորագրությամբ), որի մեկ օրինակը տեղադրել պարկի մեջ, մյուսը՝ փակ, սոսնձված ծրարով, ստորագրությամբ հանձնել ինկասատորին: Ծրարի փակված մասում պետք է լինի Պատվիրատուի կնիքը և պատասխանատու անձի ստորագրությունը (կնիքի բացակայության պարագայում Պատվիրատուի պատասխանատու անձի ստորագրությունը),
- երեք օրինակից լրացնել ընդհանուր պարկերի քանակության մասին ամփոփագիր՝ նշելով պարկերի համարները,
- յուրաքանչյուր ամփոփագրի օրինակ կնքվում է Պատվիրատուի կնիքով և ստորագրվում է պատասխանատու անձի կողմից (կնիքի բացակայության /պարագայում ամփոփագրի երկու օրինակները վավերարցվում են Պատվիրատուի պատասխանատու անձի ստորագրությամբ):

2.2.2. Պայմանագրի 2.2.1-րդ կետում նկարագրված գործողությունները ավարտել մինչև ինկասացիոն խմբի ժամանումը:
2.2.3. Ապահովել՝

- Ինկասացիոն ավտոմեքենաների համար հատուկ կայանատեղ, որտեղ մեքենաները կարող են ժամանակավոր կայանվել իրենց գործառույթները իրականացնելու համար,
- Հայինկասացիայի կողմից Արժեքների ընդունումը գաղտնամուտքից կամ ներսի բակից, (գերադասելի է առաջին հարկում) Հայինկասացիայի լիազորված աշխատակիցներին հատկացնել մեկուսացված և ներսից փականով փակվող ինկասացիոն տարածք Արժեքների ընդունման–հանձնման և փոխադրման գործողությունները պատշաճ կազմակերպելու նպատակով,
- ինկասացիոն տարածքի և դրան հարող տարածքների ազատ լինելը կողմնակի իրերից և Արժեքների հանձնման-ընդունման գործընթացին չմասնակցող անձանցից, բացառությամբ Հայինկասացիայի և Պատվիրատուի ղեկավարության,
- Պատվիրատուի տարածքում լուսավորված ճանապարհների առկայությունը դեպի ինկասացիոն տարածք:

2.2.4. Յուրաքանչյուր անգամ ինկասացիոն տարածք մուտք գործելուց առաջ Արժեքները հանձնողի միջոցով ստուգել ինկասատորի լուսանկարով վկայականը, Արժեքները ստանալու իրավունքի լիազորագիրը և ներկայացման քարտը՝ ստորագրված և կնքված Հայինկասացիայի ստորաբաժանման ղեկավարի կողմից, որից հետո նախապատրաստված պարկը՝ նախօրոք կնքված, և փաստաթղթերը հանձնել ինկասատորին: Պարկը փակելու համար կապարակնիքների, թելի և անդորրագրերի առկայությունը Պատվիրատուն ապահովում է ինքնուրույն:
2.2.5. Եթե պարկը ինկասատորին հանձնելու ժամանակ ունի Պայմանագրի 2.1.4-րդ կետով սահմանված թերությունները, ապա Արժեքները հանձնողի ստորագրությամբ ներկայացման քարտում պարկի չհանձնման պատճառների մասին նշումներ կատարել:

2.2.6. Ապահովել տեսողական (այդ թվում օգտագործելով տեսասարքավորումներ՝ դրանց առկայության դեպքում) կամ ուղղակի հավաքագրող-ինկասատորի (այսուհետ՝ ինկասատոր) ուղեկցումը անվտանգության աշխատակցի միջոցով (եթե Պատվիրատուն ունի անվտանգությունն ապահովող աշխատակից), ուղեկցել մինչև ավտոմեքենա նստելը Արժեքների հանձնման-ընդունման դեպքում և դիմավորել մուտքի մոտ, նրան առջևից ուղեկցելով հասցնել ինկասացիոն տարածք, որտեղ կատարվում է Արժեքների ընդունում–հանձնումը: Պատվիրատուի անվտանգությունն ապահովող աշխատակցի բացակայության դեպքում սույն կետը չի կիրառվում:
2.2.7. Աշխատանքների ավարտից հետո, Պայմանագրի լուծումից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնել Հայինկասացիայի կողմից տրամադրված ինկասատորական դրամական պայուսակները: Ինկասատորական դրամական պայուսակների վերադարձման անհնարինության դեպքում (պարկերի վնասվածքի կամ կորստի դեպքում) Պատվիրատուն հատուցում է Հայինկասացիային ինկասատորական դրամական պայուսակների արժեքը՝ Պայմանագրի կողմերի գրավոր համաձայնությամբ որոշված գնով:

2.2.8. Արժեքների հանձնման գործընթացը նպատակահարմար է կազմակերպել այնպես, որ այն չգերազանցի 10 րոպեն: Ընդ որում, ժամանակի հաշվարկը սկսվում է ինկասացիոն մեքենայից հավաքագրող-ինկասատորի իջնելու պահից և ավարտվում նրա՝ մեքենա վերադառնալու պահին:
3. Հայինկասացիան և Պատվիրատուն պարտավորվում են պահպանել ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 2006 թ. օգոստոսի 15 – ի թիվ 496 – Ն որոշմամբ սահմանված կարգն ու պայմանները :

4. ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Արժեքները փոխադրվում են մինչև նախատեսված վայր և հանձնվում Արժեքները ստացող Պատվիրատուի լիազոր պատասխանատու անձին (այսուհետ՝ Պատվիրատուի աշխատակից), ով ներկայացնում է Պատվիրատուի աշխատակից լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, Պատվիրատուի կողմից տրամադրված լիազորագիր, առկայության դեպքում նաև վկայական, անցաքարտ և այլն) և ստորագրում ինկասատորի կողմից ներկայացված ներկայացման քարտում:
4.2.Պատվիրատուի աշխատակիցը ինկասատորի ներկայությամբ Արժեքների ընդունումը կատարում է կնքված պարկերով՝ ստուգելով պարկի և կնիքի ամբողջականությունը (չվնասված լինելը): Պարկի կամ կնիքի վնասված լինելու դեպքում կազմվում է ակտ՝ 2 օրինակից, որը ստորագրվում է Պատվիրատուի աշխատակցի և ինկասատորի կողմից: Ակտի մեկական օրինակ տրամադրվում է Պատվիրատուին և Հայինկասացիային: Վնասված պարկում առկա Արժեքները, ինկասատորի ներկայությամբ, վերահաշվարկվում են Պատվիրատուի աշխատակցի կողմից, պարկում առկա Արժեքները համեմատվում են Դրամական հասույթով պայուսակը ուղեկցող տեղեկագրի հետ: Անհամապատասխանությունների դեպքում կազմվում է ակտ, որը հիմք է հանդիսանում հայտնաբերված անհամապատասխանության հաստատման համար՝ փոխադարձ կնքված երկկողմ պայմանագրի համաձայն: Ակտը ստորագրում են Արժեքները ընդունող Պատվիրատուի աշխատակիցը և ինկասատորը: Ակտի մեկական օրինակ տրամադրվում է Պատվիրատուին և Հայինկասացիային:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Փոխադրվող Արժեքների ամբողջականության համար Հայինկասացիայի պատասխանատվությունը Պատվիրատուի առջև սկսվում է Արժեքները ընդունելու պահից և ավարտվում է Արժեքները Պատվիրատուի աշխատակցին հանձնելու պահին՝ համաձայն ընդունում-հանձնումը հաստատող փաստաթղթերի:

5.2. Հայինկասացիան Պատվիրատուի առջև պարկերի մեջ դրված Արժեքների ամբողջականության, կորստի և վնասվածքի համար պատասխանատվություն չի կրում, եթե պահպանված են պարկերի և կապարակնիքների ամբողջականությունը:

5.3. Փոխադրվող Արժեքների կորստի կամ պակասորդի դեպքում, եթե դա կապված է պարկերի և կապարակնիքների ամբողջականության խախտման հետ, Հայինկասացիան Պատվիրատուի առջև լրիվ ծավալով պատասխանատվություն է կրում կորած կամ պակասած Արժեքների չափով:

5.4. Պայմանագրի 5.3-րդ կետում նշված կորած կամ պակասած Արժեքների գումարը Հայինկասացիան պարտավոր է Պատվիրատուին փոխհատուցել այդ կորստի/պակասորդի հաստատման օրվանից հետո 30 (երեսուն) բանկային օրվա ընթացքում: Սույն կետով սահմանված 30 (երեսուն)-օրյա ժամկետը խախտելու դեպքում Հայինկասացիան պարտավոր է, բացի փոխհատուցվող գումարը վճարելուց, Պատվիրատուին վճարել նաև տույժ՝ չվճարված գումարի 0.005%-ի չափով՝ կետանցի յուրաքանչյուր ուշացված օրվա համար, բայց ոչ ավել 25 000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամից: Սույն կետով հաշվարկված տույժերի գումարը Հայինկասացիան փոխանցում է Պատվիրատուի համապատասխան բանկային հաշվին փոխհատուցվող գումարի հետ միասին:

5.5. Պայմանագրի 6-րդ գլխով սահմանված վճարման ժամկետը խախտելու դեպքում Պատվիրատուն պարտավորվում է կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը հաշիվ պահանջագրում նշված գումարին վճարել տոկոսներ՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

5.6. Պայմանագրով ստանձնած մնացած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման յուրաքանչյուր դեպքի համար կազմվում է առանձին ակտ, որը ստորագրվում է կողմերի պատասխանատու անձանց կողմից, և խախտող կողմը յուրաքանչյուր խախտման համար մյուս կողմին վճարում է տուգանք՝ 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամի չափով:

6. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Հայինկասացիայի կողմից Պատվիրատուին մատուցված ծառայությունների դիմաց Պատվիրատուն վճարում է Հայինկասացիային ամսական 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ Հայինկասացիայի կողմից ներկայացվող հաշիվ պահանջագիրը ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում:

6.2. Պայմանագրի 6.1-րդ կետում նշված սակագներին ավելացվում է ԱԱՀ-ն՝ 20%-ի չափով:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ իրավիճակներ, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

7.2. Ստեղծված իրավիճակի մասին կողմերը անմիջապես գրավոր տեղյակ են պահում միմյանց:

7.3. Պայմանագրի 7.1-րդ կետով սահմանված հանգամանքների վերանալու դեպքում կողմերը անմիջապես տեղյակ են պահում միմյանց և հայտնում են պայմանագրային պարտավորությունների կատարումը վերսկսելու ժամկետի մասին:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Պայմանագիրը ցանկացած ժամանակ կարող է լուծվել կողմերի համաձայնությամբ:

8.2. Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ նախքան դրա ժամկետը լրանալը՝ այդ մասին առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցելով, մյուս կողմին: Պայմանագրի լուծումը Կողմերին չի ազատում մինչ այդ պահը իրենց կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից:

8.3. Պայմանագրի լուծման դեպքում Պայմանագրի Կողմերը կատարում են նաև վերջնահաշվարկ (այդ թվում նաև՝ Պայմանագրով նախատեսված տուգանքները, պարկերը վերադարձնելը կամ պարկերի

արժեքի հատուցումը և հաշվարկված տույժերի, տուգանքների վճարումը և այլն):

8.4. Կողմերը պարտավոր են պահպանել Պայմանագրի կատարման կապակցությամբ իրենց հայտնի դարձած բանկային և առևտրային գաղտնիք կազմող բոլոր տեղեկությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Ընդ որում բանկային գաղտնիքի և առևտրային գաղտնիքի պահպանման պարտականությունը գործում է անժամկետ՝ անկախ Պայմանագրի գործողության ավարտից:

8.5. Պայմանագրի գործողության դադարեցումը Կողմերին չի ազատում մինչև այդ պահը իրենց կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հոկտեմբերի 8-ից և գործում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը:

9.2. Եթե Պայմանագրի կողմերից որևէ մեկը մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը՝ ոչ ուշ քան 30 (երեսուն) օրացուցային օր առաջ չի հայտնում Պայմանագրի լուծման մասին, ապա Պայմանագրի գործողության ժամկետը ավարտման ամսաթվի հաջորդ օրվանից համարվում է երկարաձգված 1 (մեկ) տարի ժամկետով՝ կրելով շարունակական բնույթ:

9.3. Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են երկկողմ ստորագրված գրավոր լրացուցիչ համաձայնագրով և հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.4. Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո որոշ հանգամանքների էական փոփոխությունը, որը կողմերը չէին կարող կանխատեսել պայմանագիրը կնքելիս, հիմք է հանդիսանում Պայմանագիրը վերանայելու համար:

9.5. Սակագնի հաշվարկում ընդունված ծախսային հոդվածների էական փոփոխությունների դեպքերում Պայմանագրով սահմանված սակագինը կարող է փոփոխվել Կողմերի միջև ստորագրված լրացուցիչ համաձայնագրով, որը հետագայում կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

9.6. Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ: Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.7. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.8. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 4 (չորս) էջից, կնքված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար: Պայմանագրի Թիվ 1 հավելվածը և հետագայում լրացուցիչ համաձայնագրերով ստորագրված հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

10. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ՝

Հայինկասացիա	*Պատվիրատու*
«Հայինկասացիա» ՓԲԸ	ՀՀ ԱՆ ՊԱՀԿ ծառայություն
Գործադիր տնօրեն	// ՀՀ Գլխավոր հարկադիր կատարող
_____ Լ. Մարգսյան	_____ Ս. Պողոսյան
ՀՀ,ք. Երևան, Գ. Անիաղթի 3	ՀՀ,ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՎՀՀ 00047696	ՀՎՀՀ 01003338
հեռախոս՝ (010) 281500, 285371	հեռախոս՝ _____
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ	Հ/Հ 900013288023
Հ/Հ 16040102069000/ 3020200001	Թիվ 1 գործառնական վարչություն

Թիվ 1 հավելված
«Հայինկասացիա» ՓԲԸ և ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության
միջև 2014թ. հոկտեմբերի 8-ին կնքված
թիվ 14-45 պայմանագրի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Արժեքների ընդունում, փոխադրում և հանձնում իրականացնելու

1. Երկուշաբթի – ուրբաթ օրերին (բացառությամբ ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերի) Պատվիրատուի բանավոր հայտի (այսուհետ՝ Հայտ) հիման վրա, որը Պատվիրատուն պարտավորվում է ներկայացնել համաձայնեցված հեռախոսահամարով նախատեսվող փոխադրման նախորդ օրը մինչև ժամը 18:00-ն, իրականացնել Արժեքների ընդունում, փոխադրում և հանձնում Պատվիրատուի լիազոր պատասխանատու անձին՝ ըստ Աղյուսակ 1-ում նշված հասցեի և ժամերի՝

Աղյուսակ 1

Հ/Հ	Երթուղի	Արժեքների ընդունման ժամերը	Արժեքների հանձնման օրը, ժամը և վայրը
1	Պատվիրատուի՝ ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41ա հասցեից «Ամերիաբանկ» ՓԲԸ «Կոմիտաս» մասնաճյուղ	09:30-10:00-ն ընկած ժամանակահատվածում՝ Պատվիրատուի լիազոր պատասխանատու անձից	Նույն օրը մինչև ժամը 16:00-ն՝ Պատվիրատուի լիազոր պատասխանատու անձին
2	Պատվիրատուի՝ ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41ա հասցեից «Ամերիաբանկ» ՓԲԸ «Կասկադ» մասնաճյուղ	09:30-10:00-ն ընկած ժամանակահատվածում՝ Պատվիրատուի լիազոր պատասխանատու անձից	Նույն օրը մինչև ժամը 16:00-ն՝ Պատվիրատուի լիազոր պատասխանատու անձին

2. Աղյուսակ 1-ում նշված հասցեում Արժեքների ընդունումը գաղտնամուտքից կամ ներսի բակից չապահովելու դեպքում Արժեքներ պարունակող յուրաքանչյուր պարկի մեջ առկա գումարը սահմանափակել 200.000.000 (երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամով կամ դրան համարժեք արտարժույթով:
3. 500.000.000(հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթով ՀՀ դրամը գերազանցող գումար փոխադրելու դեպքում փոխադրումներն համակարգելու նպատակով տեղյակ պահել Հայինկասացիայի ինկասացիայի վարչությանը նախօրոք՝ փոխադրումից առնվազն 3 ժամ առաջ:

Փոխադրման ենթակա Արժեքների վերաբերյալ փաստաթղթային ձևակերպումները կատարելիս մեկ ավտոմեքենայով փոխադրվող Արժեքների գումարը սահմանափակել 1.400.000.000(մեկ միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամով կամ դրան համարժեք արտարժույթով:
4. Պատվիրատուն պարտավորվում է ապահովել հետևյալը՝ Աղյուսակ 1-ում նշված հասցեներից Արժեքների փոխադրումը դեպի Պատվիրատուի կողմից նշված հասցեով Արժեքները ստացողի կողմից ենթակա է ընդունման նույն ձևով, ինչ ձևով Պատվիրատուի կողմից հանձնվել է Հայինկասացիային՝ ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 2005թ. ապրիլի 26-ի թիվ 199-Ն և 2006թ. օգոստոսի 15-ի թիվ 496-Ն որոշումներով սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան:
5. Թիվ 1 հավելվածով չնախատեսված ծառայությունների մասով կնքվում է լրացուցիչ համաձայնագիր:

7. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հայինկասացիա
«Հայինկասացիա» ՓԲԸ
Գործադիր տնօրեն
_____ Լ. Սարգսյան

ՀՀ, ք. Երևան, Դ. Անհաղթի 3
ՀՎՀՀ 00047696
հեռախոս՝ (010) 281500, 285371
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16040102069000/ 3020200001

Պատվիրատու
ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն
ՀՀ Գլխավոր հարկադիր կատարող
_____ Մ. Պողոսյան

ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՎՀՀ 01003338
հեռախոս՝ _____
Հ/Հ 900013288023
Թիվ 1 գործառնական վարչություն